



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» փետրվարի 2023 թվականի N 197

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի ԹԻՎ 698 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և 37-րդ հոդվածի, **որոշում եմ.**

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 17-ի «Չարենցավան համայնքում աղետների ռիսկի կառավարման պլանը հաստատելու մասին» թիվ 698 որոշման N3, N4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխան հավելվածի N 1, N 2 -ի :
2. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 17-ի «Չարենցավան համայնքում աղետների ռիսկի կառավարման պլանը հաստատելու մասին» թիվ 698 որոշման N 3. N 4 հավելվածները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՅԻՅՑ
Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների



2023 թ. փետրվարի 01-ի N 197 որոշման

1. Նախապատրաստական միջոցառումներ						
Հ/Հ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Եշտմունքներ կրականացման մասին (այո/ոչ)
1.	Բնակավայրերում կամավորական խմբերի հիմնում		Չարենցավան		Ծախսեր չի պահանջվում	
2.	Աղետների վերաբերյալ կրթական նյութերի պատրաստում և աղետների կառավարման վերաբերյալ կրթության խթանում	Տարվա ընթացքում	Համայնքապետարան	Մ.ՄԵԼԻՔՅԱՆ	Ծախսեր չի պահանջվում	
3.	Լպտառիվել բնակչության, դպրոցների, և այլ կազմակերպությունների ներգրավվումը արտակարգ իրավիճակների կանխման և դրանց հետևանքների վերացման միջոցառումների նախապատրաստմանը և իրականացմանը	Տարվա ընթացքում	Չարենցավան Այսօրվարս Արզակյան Բժնի Ֆանտան Կարենիս	Վարչական ղեկավարների՝ Վ.Անդրիասյան Ա.Բարդասարյան Դ.Բվանյան Շ.Անդրեասյան Լ.Մարգարյան	Ծախսեր չի պահանջվում	
4.	Հավաքագրել և հաշվառել բնակավայրերում տեղի ունեցած արտակարգ	Տարվա ընթացքում	Համայնքապետարան	Վ.ՉԻԼԻՔՅԱՆ Մ.ՄԵԼԻՔՅԱՆ	Ծախսեր չի պահանջվում	

Հ/ Z	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Լշումներ իրականացման մասին (այո/ոչ)
	դեպքերն ու իրավիճակները					
5.	2020 թվականի ԱՌԿ պլանի մշակում և հաստատում	20.05	Համայնքապետարան	Վ.Զիլինգալյան	Ծախսեր չի պահանջվում	
6.	ԱՌԿ խորհրդի նիստի անցկացում	23.12	Համայնքապետարան	Վ.Զիլինգալյան	Ծախսեր չի պահանջվում	
7.	Համայնքի ազդարարման և տեղեկատվություն փոխանակման կայուն համակարգի ստեղծում	Տարվա ընթացքում	Համայնքապետարան	Ս.Մուրադյան	Ծախսեր չի պահանջվում	

II. Վտանգների և խոցելիության նվազեցման միջոցառումներ

Երկրաշարժ						
8.	Սեյսմիկ ռիսկի գնահատում					
9.	Բնակչության իրազեկվածության բաշխում և ուսուցում	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Զիլինգալյան	Ծախսեր չի պահանջվում	
10.	Համայնքապետարանի աշխատակիցների և համայնքային արձագանքող ստորաբաժանումների ուսուցում	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Զիլինգալյան	Ծախսեր չի պահանջվում	
11.	Բնակավայրերի ենթահամակարգերի հուսալի կառուցում	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Զիլինգալյան Բ.Բալթալյան	Աջակցող կազմակերպություն	
12.	Տների, շինությունների ամրացում	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Զիլինգալյան Բ.Բալթալյան	Աջակցող կազմակերպություն	
13.	Բնակավայրերում շենքերի և շինությունների կառուցման և շահագործման հետ կապված	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Զիլինգալյան Բ.Բալթալյան	Աջակցող կազմակերպություն	

Z/ 2	Միջոցառման անվանումը	Անցկացման և ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այո/ոչ)
	սելավիկ անվտանգության պահանջների տարածում					
Կարկուտ						
14.	Հակահարկուսային կայանների տնկադրում	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Չիլինգալյան Գ.Թովմալյան	Աջակցող Խոզ/հովիտ/բուսություն	
15.	Առաջարկել բնակիչներին՝ ձեռք բերել և օգտագործել հակակարկուսային ցանցեր	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Չիլինգալյան Ս.Մ.Խորադյան	Աջակցող կազմակերպություն	
16.	Կանխատեսման և վաղ ազդարարման համակարգի մշակում և կիրառում	Տարվա ընթացքում	Համայնք	Վ.Չիլինգալյան Մ.Մեղիքյան	Ծախսեր չի պահանջվում	
Էրաշտ						
17.	Բնակչությանը հուսալի կլինալական տեղեկատվության աստիճանի և իրազեկում	ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր	Համայնք	Վ.Չիլինգալյան	Ծախսեր չի պահանջվում	
18.	Ուղղման ցանցի բարեկարգում, ընդլայնում	Տարվա ընթացքում	Համայնք	Ա.Աբգալյան	Ծախսեր չի պահանջվում	
19.	Նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի ներմուծում					
Ցրտահարություն						
20.	Բնակչությանը հուսալի կլինալական տեղեկատվության ապահովում և իրազեկում	հունվար, փետրվար, ապրիլ, մայիս սեպտեմբեր, օգոստոս, դեկտեմբեր	Համայնք	Վ.Չիլինգալյան Ս.Բալասանյան	Ծախսեր չի պահանջվում	
21.	Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում					

2/ 2	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այդ/ոչ)
22.	Բնակչության ռադիոյով և իրազեկում ցրտահալություններից պաշտպանելու միջոցների, ձնհորի վեցարկայով	հունվար, փետրվար, ապրիլ, մայիս սնուկտանքե ր, նոյեմբեր, դեկտեմբեր	Համալսար	Վ. Չիլինգալյան Ս. Բալարեկյան	Ծախսեր չի սահմանափակում	
Քարտափում						
23.	Քարտափման հատվածների մասնագիտական հետազոտում՝ հնարավորության դեպքում՝ իրականացնել տրիտոտիտի քայտություն	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Վ. Չիլինգալյան Բ. Բալարյան	Համայնքի բյուջե աջակցող կազմակերպություններ ը	
24.	Պարբերական մոնիթորինգի կազմակերպում	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Վ. Չիլինգալյան Բ. Բալարյան	Ծախսեր չի սահմանափակում	
25.	Վտանգի մոտին բնակչության իրազեկում	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Ս. Մուրադյան Ս. Բալարեկյան	Ծախսեր չի սահմանափակում	
26.	Ճանապարհների փակցնել քարտափման վտանգի մասին զգուշացնող նշաններ	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Վ. Չիլինգալյան Բ. Բալարյան	Ծախսեր չի սահմանափակում	
Հորդառատ տեղումներ						
27.	Մշակել և կիրառել կանխատեսման և վաղ իրազեկման համակարգ	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Վ. Չիլինգալյան Բ. Բալարյան	Ծախսեր չի սահմանափակում	
28.	Ապահովել բնակչության վաղ իրազեկումը	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Վ. Չիլինգալյան Ս. Բալարեկյան	Ծախ ծախսեր չի սահմանափակում	
29.	Ճանապարհների եզրերին հեղեղատների կառուցում և ճանապարհների բարեկարգում	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Վ. Չիլինգալյան Ա. Աբգալյան Բ. Բալարյան	Համայնքի բյուջե աջակցող կազմակերպություն	

2/2	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Դշումներ իրականացման մասին (այո/ոչ)
-----	----------------------	-------------------	-----------------	------------------	-----------------------	-------------------------------------

Գետի վարարում (մեղեղում)

30.	Գետի ափերի պաշտպանիչ հատվածի բարձրացում, ափերացում, մասնավորապես ջրածածկվող տարածքների երկայնքով կամ ափապաշտպան պատնեշների կառուցում	մարտ ապրիլ մայիս հոկտեմբեր նոյեմբեր	Խամայնքապետ արան	Վ.Չիլինցադյան Ա. Աբգալյան Բ. Բալբաբյան	Համայնքի բյուջե աջակցող կազմակերպություն	
31.	Գետերի վրա գտնվող վթարային կամուրջների տնօրոցում կամ ապամոնտաժում և նորի կառուցում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Վ.Չիլինցադյան Ա. Աբգալյան Բ. Բալբաբյան	Համայնքի բյուջե ուղղակցող կազմակերպություն	
32.	Բնակչության իրազեկվածության բարձրացում և ուսուցում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Ս. Մուրադյան Ս. Բալբաբյան	Ծախսեր չի պահանջվում	
33.	Վտանգված ճանապարհահատվածների շրջանցիկ ճանապարհների կառուցում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Վ.Չիլինցադյան Բ. Բալբաբյան	Համայնքի բյուջե աջակցող կազմակերպություն	
Ուժեղ քամիներ						
34.	Մշակել կանխատեսման և վաղազդարարման համակարգ և կիրառել	Տարվա ընթացքում	Խամայնք	Վ.Չիլինցադյան	Ծախսեր չի պահանջվում	
35.	Ապահովել բնակչության վաղ իրազեկումը	Տարվա ընթացքում	Խամայնք	Վ.Չիլինցադյան Ս. Բալբաբյան	Ծախսեր չի պահանջվում	
36.	Ազդիների երկայնքով պաշտպանիչ շերտի կառուցում տեղադրում (բնական կամ արհեստական	Տարվա ընթացքում	Խամայնք	Վ.Չիլինցադյան Բ. Բալբաբյան	Ծախսեր չի պահանջվում	

N/ 2	Միջոցառման անվանումը	Անցկացման և ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այո/ոչ)
	անտառաշերտ, պաշտպանիչ ցունկապատեր)					
Համաճարակային բռնկում						
37.	Խմելու ջրի որակի բարձրացում և պահպանում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Վ.Չիլինգարյան Վ.Թովմատյան	Խամայնքի բյուջե	
38.	Կանխարգելիչ միջոցառումների իրականացում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Վ.Չիլինգարյան Վ.Թովմատյան	Խամայնքի բյուջե	
39.	Ուսումնական հաստատություններում և մանկապարտեզներում սանիտարական կանոնների սրտիցորոնում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Գ.Գրիգորյան Ա.Զաքարյան	Ծախսեր չի պահանջվում	
Անասունների հիվանդություններ						
40.	Ժամանակին պատկաստումների կատարում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Ա.Զաքարյան	Համայնքի բյուջե	
41.	Պրոֆիլակտիկ միջոցառումների իրականացում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Ա.Զաքարյան	Համայնքի բյուջե	
42.	Բնակչության իրազեկում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Ս.Բալարեկյան	Ծախսեր չի պահանջվում	
Բույսերի հիվանդություններ						
43.	Համակարգված պայքարամիջոցների կիրառում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Ա.Զաքարյան	Համայնքի բյուջե	
44.	Բնակչության իրազեկում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Ա.Զաքարյան	Ծախսեր չի պահանջվում	
Ջրհեղեղ						
45.	Ջրահեռացման ցանցի կառուցում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Վ.Չիլինգարյան Բ.Բալարյան	Աջակցող կազմակերպություն	

2/ 2	Միջոցառման անվանումը	Անցկացման ծամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այդ/ոչ)
46.	Ջրահեռացման ցանցերի մաքրում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Համայնքի բյուջե	
Ջրածածկում						
47.	Ջրահեռացման ցանցի կառուցում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Աջակցող կազմակերպություն	
48.	Ջրահեռացման ցանցերի մաքրում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Խամայնքի բյուջե	
Սեկավ						
49.	Սեկավատարների կառուցում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Աջակցող կազմակերպություն	
50.	Սեկավատարների մաքրում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Խամայնքի բյուջե	
51.	Մեկավատարների հունի լայնացում և խորացում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Աջակցող կազմակերպություն	
Ամպրոպ/կայծակ						
52.	Հանքարդեմների տեղադրում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան		
53.	Բնակչության իրազեկում և ուսուցում վարչակապեանների մասին	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան		Ծախսեր չի պահանջվում	
54.	Շենքերի տանիքներում տեղադրել հողակցված շահարգելներ, որոնք ունեն 10 Օհմ և ավելի դիմադրություն	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Վ.Չիլիճզարյան Բ.Բալբաբյան	Ծախսեր չի պահանջվում	
55.	Առաջարկել բնակիչներին	Տարվա	Խամայնքապետ	Վ.Չիլիճզարյան		

№ 2	Միջոցառման անվանումը	Անցկացման ն ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այդ/ոչ)
	ալեհազարները հողակցել	ընթացքում	արան	Բ.Բալարյան		

Անտառային հրդեհներ

56.	Մշակել ու իրագործել հրդեհային պրոֆիլակտիկ վիճակագրամներ	մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր	Խառնոյնքույտի արան	Ա.Աբգաբյան Ա.Ղազարյան	Աջակցող կազմակերպություն	
57.	Դազմակերպել հակահրդեհային քարոզչության լայնամասշտաբ իրականացումը, մամուլով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ անտառների պահպանման, հրդեհային անվտանգության հարցերի պարբերական լուսաբանումները	մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր	Խամայնքապետ արան	Ս.Բալարյան Ս.Մուրադյան	Ծախսեր չի դրսխանջվում	
58.	Հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում	Տարվա ընթացքում	Խամայնքապետ արան	Վ.Զիլինգարյան Բ.Բալարյան	Միջազգային կազմակերպություն	
59.	Բնակչության իրազեկում՝ անտառ հաճախելու ժամանակ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ	մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր	Խամայնքապետ արան	Ս.Բալարյան	Ծախսեր չի պահանջվում	
Խտածածկ տարածքների հրդեհներ						
60.	Բնակչության իրազեկում՝ ղաշտելում և այլ խտածածկ տարածքներում հրդեհային	մայիս հունիս հուլիս	Խամայնքապետ արան	Ս.Բալարյան	Ծախսեր չի պահանջվում	

N/ 2	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այդ/ուշ)
	անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ	օգոստոս սեպտեմբեր				
61.	Բարձրացնել բնակչության գիտելիքների սակարդակը երաշտի հետևանքով բուսածածկ տարածքներում հրդեհի առաջացման վտանգի և դրա կանխարգելման մասին	մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր	համայնք	Ս.Ս.Մուրադյան Ա.՝ Լազարյան	Ծախսեր չի պահանջվում	
Ջրամբարի պառկարի վթար						
62.	Մշակել և կիրառել կանխատեսման և վաղ ազդարարման համակարգ	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Վ.Չիլիճգալյան	Աջակցող կազմակերպություն	
63.	Ազդաիվել բնակչության վաղ իրազեկում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Բալարեկյան	Ծախսեր չի պահանջվում	
64.	Բնակչության ուսուցում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Մուրադյան	Ծախսեր չի պահանջվում	
65.	Համայնքապետարանի աշխատակիցների և համայնքային այրձագանքող ստորաբաժանումների ուսուցում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Մուրադյան	Ծախսեր չի պահանջվում	
Հրդեհներ/Պայթյուններ						
66.	Բնակչության իրազեկում և ուսուցում՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ	մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր	համայնքապետարան	Ս.Ս.Մուրադյան Ս.Բալարեկյան	Ծախսեր չի պահանջվում	
67.	Համայնքային ենթակառուցվածքի տակ գտնվող կառույցներում պահպանել	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Վ.Չիլիճգալյան Վ.Թովնասյան	համայնքի բյուջե	

N 2	Միջոցառման անվանումը	Անցկացման և ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այդ/ոչ)
68.	Իրդեհային անվտանգության կանոնները և ապահովել համապատասխան հակահրդեհային սարքավորումներով Բնակավայրերում՝ բնակչությանը արագարկել օգտագործել միայն սեփական լավ վիճակում գտնվող գազի բալոններ	Տարվա ընթացքում	համայնքապետ արա	Վ.Չիլինցադյան Վ.Թովմապան	Ծախսեր չի սպախանջվում	
III. ԱՌՆ ուսուցում և վերապատրաստում						
69.	Բնակավայրերում բնակչության ուսուցում և իրազեկում ԱՌՆ (ԱՕ, վարքականոնների և այլն) վերաբերյալ	Տարվա ընթացքում	համայնք	Թ.Սահակյան	Ծախսեր չի սպախանջվում	
70.	Համայնքի ԱՌԿ խորհրդի ոմիդամների և ղեկավարի պատասխանատուների ներգրավում մասնագիտացված կառույցների կողմից կազմակերպվող դասընթացներին և սեմինարներին	Տարվա ընթացքում	համայնք	Գ.Աֆյան	Ծախսեր չի սպախանջվում	
71.	Կրթական օջախներում աղետներին և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության վերաբերյալ անձնակազմի և աշակերտների ուսուցում	Տարվա ընթացքում	համայնքապետ արան	Ա.Զաքարյան	Ծախսեր չի սպախանջվում	
72.	Կրթություն չստացող	Տարվա	համայնքապետ	Մ.Մելիքյան	Ծախսեր չի	

Հ/Հ	ԼԻՔՆԵՐԻ ՄԱՐԿԱԿԱՆՈՒՄ, ՊԱՐԹԵՐԻ ՊԱՐՄԱՆԿԱՆ ԳՐԾԻՆՔԱՅԻ ՉԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԱԽՈՒՊՈՒՄ	ԱՆՏԿՅԱՆ և ԺԱՄԻԿԵՏԻՆ	ԱՆՏԿՅԱՆ ՎԱՅՐԸ	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այդ/ույ)
73.	Բնակատեղիներ՝ հատկապես կանանց ԱԻԵՀ հիմնադրամների ուսուցանում, մեթոդական ձեռնարկների տարածում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Ս. Մելիքյան Գ. Գրիգորյան	Ծախսեր չի պահանջվում	

IV. Վարժանքներ

74.	«Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով վարժանքի կազմակերպում և իրականացում	Խոսակները ի 23	Խամայնքապետարան	Վ. Թովմասյան Ս. Հովհաննիսյան	Ծախսեր չի պահանջվում	
75.	«Տրամադրի պատվարի վերականգնման գնում» թեմայով պաշտպանության կազմակերպումը» թեմայով վարժանքի կազմակերպում և իրականացում	Նոյեմբերի 20		Վ. Թովմասյան	Ծախսեր չի պահանջվում	

V. Տեխնիկական միջոցներով համալրում

76.	Դաշտային կրակնարիչների ձեռքբերում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Ս. Վարդանյան	Խամայնքի բյուջե	
77.	Կրակնարիչների ձեռքբերում	Տարվա ընթացքում	Խամայնքապետարան	Ս. Վարդանյան	Խամայնքի բյուջե	

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այո/ոչ)
78.	Հակահրդեհային վահանակների ձեռքբերում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Վարդանյան	համայնքի բյուջե	
79	Բարձրախոսի ձեռքբերում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	ՈՎ Կարդոնյան	համայնքի բյուջե	
80.	Առաջին օգնության արկղերի ձեռքբերում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Վարդանյան	համայնքի բյուջե	
81.	Պատգարակների ձեռքբերում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Վարդանյան	համայնքի բյուջե	
82.	Համայնքապետարանի ենթակայության տակ գործող կառույցներում, այդ թվում՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար ձեռք բերել և տեղադրել ազդարարման համակարգեր	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Գ.Գրիգորյան Ա.Զաքարյան	համայնքի բյուջե	
83.	Շշակների ձեռքբերում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Մ.Մելիքյան	ԱՌԿ խորհուրդ	
84.	Զննաքրման համար համապատասխան տեխնիկայի ձեռքբերում	Տարվա ընթացքում	համայնքապետարան	Ս.Վարդանյան	աջակցող կազմակերպություն	
VI. Համագործակցություն						
85.	Համագործակցություն մարզային և համայնքային փրկարարական ուժերի հետ	Մշտապես	համայնքապետարան, Կոտայքի ՄՓՎ	Վ.Զիլինգարյան	Ծախսեր չի պահանջվում	

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Պատասխանատու անձ	Ֆինանսավորման աղբյուր	Նշումներ իրականացման մասին (այո/ոչ)
86.	Համագործակցություն մարզային և համայնքային ոստիկանության հետ	Մշտապես	համայնքապետարան ոստիկանական բաժին	Վ.Զիլինգարյան	Ծախսեր չի պահանջվում	
87.	Համագործակցություն մարզային և համայնքային բժշկական հաստատությունների հետ	Մշտապես	համայնքապետարան, Չարենցավանի ԲԿ	Վ.Զիլինգարյան	Ծախսեր չի պահանջվում	

Համայնքի ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեմա



Մարգվետ
Սիսյուն Սահակյան
հեռ. 098 22 22 70

ՀՀ ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանում,
մարզային ՃԿԿ
հեռ. 911,112

Համայնքի ղեկավար
/ԱՌԿ խորհրդի ղեկավար/
Հակոբ Շահգալյան
հեռ. 093 00 36 63


Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար
Սիրեն Մուրադյան
հեռ. 094 431215

Բնակավայրի վարչական ղեկավարներ
Վառե Անդրեասյան 094 10 17 94
Արմեն Բաղդասարյան 093 20 00 95
Դավիթ Իվանյան 094 47 44 44
Լիպարիտ Մարգարյան 077 07 26 16
Հովհաննես Անդրեասյան 077 77 96 97

Համայնքի ղեկավարի
տեղակալ(ներ)
Սևակ Վարդանյան
հեռ. 093 57 08 71
Գայանե Գրիգորյան
հեռ. 093 96 9109

ԱՌԿ խորհրդի անդամներ/ավագանու անդամներ
Նորայր Վարդանյան 094 42 83 51
Կարեն Դավթյան 093 26 40 10
Վարդան Մակինյան 094 11 99 55

ԱՌԿ խորհրդի անդամներ/դրոտային
պատասխանատուներ
համաձայն կից ցուցակի



Ցուցակ

ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուների հեռախոսահամարների

Հ/հ	Անուն, ազգանուն	Պաշտոն	Հեռ. համար
1	Տիգրան Թորոսյան	Չարենցավանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար	098 133100
2	Վարուժան Բարսամյան	տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման եվ հավաքագրման բաժնի պետ, խորհրդի անդամ	094 107400
3	Գայանե Գրիգորյան	հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Համայնքի դեկավարի տեղակալ, խորհրդի անդամ	093 969109
4	Սաթենիկ Բալաբեկյան	կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, խորհրդի անդամ	077 688500
5	Շողակաթ Մելտոնյան	բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության եվ սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ, խորհրդի անդամ	094 639612
6	Աշոտ Ղազարյան	կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման եվ հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ, խորհրդի անդամ	091 990302
7	Ռուդիկ Սահակյան	կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության եվ բնակկոմունալ տնտեսության բաժնի առաջատար մասնագետ, խորհրդի անդամ	094 530782
8	Բենիկ Բալթայան	ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության եվ բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ, խորհրդի անդամ	094 113375
9	Գրիշա Հայրապետյան	դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Համայնքի հուղարկավորման ստորաբաժանման դեկավար, խորհրդի անդամ	094 332045
10	Արմինե Զաքարյան	անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության եվ սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ, խորհրդի անդամ	093 218459



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» փետրվարի 2023 թվականի N 196

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 356 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և 37-րդ հոդվածի, **որոշում եմ.**

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 20-ի «Չարենցավան համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 356 որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխան հավելվածի N 1-ի :
2. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 20-ի «Չարենցավան համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 356 որոշման N 1 հավելվածը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ



Հավելված N 1

Չարենցավան համայնքի ղեկավարի
«01» փետրվար 2023 թ-ի N 196 որոշման

ԿԱԶՄ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Հակոբ Շահգալոյան/համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարիանման և պատասխարման պատասխանատու՝ Սևակ Վարդանյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Սուրեն Մուրադյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝
 - 1) ավագանի Նորայր Վարդանյան,
 - 2) ավագանի Կարեն Դավթյան,
 - 3) բնակավայրի վարչական ղեկավարներ՝
 - ա. Ալափարս բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահե Անդրիասյան,
 - բ. Արզական բնակավայրի վարչական ղեկավար՝ Լիպարիտ Մարգարյան,
 - գ. Բջնի բնակավայրի վարչական ղեկավար՝ Հովհաննես Անդրեասյան,
 - դ. Ֆանտան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դավիթ Իվանյան,
 - ե. Կարենիս բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Բաղդասարյան:
 - 4) ոլորտային պատասխանատուներ՝
 - ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Տ.Թորոսյան
հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար,
 - բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Ա.Հայրապետյան
 - գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Վ.Բարսամյան
 - դ. կապի պատասխանատու՝ Ա.Պետրոսյան
 - ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Գ.Սահակյան
 - զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Ս.Բալաբեկյան,
 - է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Մ.Մինասյան
 - ը. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Բ.Բալաբյան
 - թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Գ.Հայրապետյան
 - ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Ա.Զաքարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հունվարի 2023 թվականի N 195

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱՇՔ», «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ, «ԳԱՌԶՈՒԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԶԵՂԶ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 33 որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ **որոշում եմ.**

1. Չարենցավան համայնքի «**Հրաշք**» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սանի համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

**Անահիտ Գրիգորյան
Վահե Մարտիրոսյան**

2. Չարենցավան համայնքի «**Ծիծեռնակ**» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սաների համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

**Դավիթ Խոջայան
Զարուհի Սարգսյան
Նարե Հազեյան**

**Լալա Արզումանյան
Աննա Սարգսյան
Նարե Արշակյան**

3. Չարենցավան համայնքի «**Գառզուի անվան արվեստի դպրոց**» ՀՈԱԿ-ի ներքոհիշյալ սաների համար սահմանել ծնողական վճարի 50% զեղչ՝

**Էլեն Կոնջորյան
Նարայա Գաբրիելյան
Դիանա Ալահվերդյան
Անգելինա Պողոսյան
Մանե Առաքելյան**

**Նարե Մուքայելյան
Արփինե Աբրահամյան
Եվա Բադալյան
Հասմիկ Գալստյան
Մալենա Սիմոնյան**

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փետրվարի 01-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք

Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1

Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 194

ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 20.12.2022թ. թիվ 03/21080-2022 գրությունը և «Հայքլին» ՍՊԸ-ի տնօրեն Խ. Բադալյանի 2022 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 5642/07 դիմումը որոշում եմ՝

1. Օգտագործման իրավունքով՝ տարեկան 75000 ՀՀ դրամ վարձավճարով Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայրի արոտավայրերից անասունների սեզոնային արոտ կազմակերպելու համար, երեք տարի ժամկետով, 75 հա ընդհանուր մակերեսով արոտավայր տրամադրել «Հայքլին» ՍՊԸ-ին՝ ըստ կից ներկայացվող հատակագծի:
2. «Հայքլին» ՍՊԸ-ի հետ սահմանված կարգով կնքել արոտավայրից օգտվելու պարզ պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ **Բ. Բալթաբյանի** վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 193

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 672 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և 37-րդ հոդվածի, հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 46.1-րդ և 46.2 հոդվածների պահանջները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի հունվարի 16-ի N 01/08.1/00263-2023 գրությունը, **որոշում եմ.**

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 07-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 672 որոշման N 01, N 37 և N 43 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխան հավելվածի N 1-ի, N 2-ի, N 3-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 23-ի «Չարենցավան համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 672 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 572 որոշման N 1 հավելվածը և Չարենցավան համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 07-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 672 որոշման N 37, N 43 հավելվածները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ



**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի (այսուհետ՝ բաժին) առաջատար մասնագետի (**ծածկագիր 3.1-16**) (այսուհետ՝ առաջատար մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:

2. Աշխատակազմի զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետին «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

1.2. Ենթակա և հաշվետու է

Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

1. Առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի գլխավոր մասնագետը կամ բաժնի առաջատար մասնագետը՝ բաժնի պետի հայեցողությամբ: Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ղեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

2. Առաջատար մասնագետը փոխարինում է գլխավոր մասնագետին և առաջատար մասնագետին՝ նրանց բացակայության դեպքում բաժնի պետի հայեցողությամբ:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան Կ. Դեմիրճյանի անվան հրապարակ 1:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Առաջատար մասնագետը՝

- կատարում է բաժնի պետի հանձնարարությունները, դրանք կատարում է ժամանակին և պատշաճ որակով:
 - բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է համապատասխան տեղեկատվական համակարգերի սպասարկման, տվյալների մշակման, տեղեկատվության /ցուցակներ, գրաֆիկներ, տեղեկանքներ/ և վերլուծական նյութերի պատրաստման աշխատանքներ:
 - իրականացնում է աշխատակազմի տեղեկատվական համակարգի տվյալների արդիականացման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի համար վերլուծությունների և համապատասխան կանխատեսումների կատարման աշխատանքներ,
 - անհրաժեշտության դեպքում բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին:
 - բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը:
 - իրականացնում է համայնքի պաշտոնական կայքի խմբագրում, պաշտոնական տեղեկատվության հրապարակում
 - կատարում է բաժնի փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքները:
 - վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը,
 - իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման աշխատանքներին.
 - իր իրավասության սահմաններում մասնակցում է նախագորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ Տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացմանը.
 - իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.
- Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է _____ այդ _____ ակտերով _____ նախատեսված _____ այլ _____ պարտականություններ:

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Առաջատար մասնագետը՝

- իրեն ենթակա աշխատողներ չունի.
- բաժնի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.
- կատարում է բաժնի պետի հանձնարարականները.
- պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Առաջատար մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

3.3. Շփումները և ներկայացուցչությունը

1. աշխատակազմի և բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.
2. աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ.
3. աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

1. Առաջատար մասնագետը բաժնի պետի հանձնարարությամբ, մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:
2. Բաժնի առաջատար մասնագետը բաժնի առջև դրված գործառույթներից բխող բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի:

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Ունի առնվազն միջնակարգ կրթություն.

4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

1. ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», ««Անձնական տվյալների պաշտպանության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն որոշման աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը
3. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

Առաջատար մասնագետին Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քարտուղարի (ծածկագիր 1.1-1) (այսուհետ՝ քարտուղար) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:
2. Քարտուղարին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):

1.2. Ենթակա և հաշվետու է

1. Քարտուղարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:
2. Քարտուղարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների պետերը և աշխատակազմի ստորաբաժանումներում (բաժիններում) չներառված այլ պաշտոններ զբաղեցնող անձինք:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

1. Քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի բաժինների պետերից մեկը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:
2. Օրենքով նախատեսված դեպքերում քարտուղարին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան Կ. Դեմիրճյանի անվան հրապարակ 1:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Ապահովում է աշխատակազմում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների իրականացումը:
2. մասնակցում է աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին:

3. ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը.
4. համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.
5. աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների մասին մրցութային հանձնաժողովի եզրակացությունը, իսկ այդ արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշումն ստանալուց հետո, աշխատանքային երեք օրվա ընթացքում, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է տվյալ պաշտոնում.
6. հաստատում է աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.
7. համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակներ
8. ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.
9. աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշման հիման վրա օրենքով սահմանված ժամկետում ընդունում է տվյալ համայնքային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում.
10. օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի ու Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ.
- 11 իր կողմից համայնքային ծառայության դասային աստիճան շնորհած աշխատակազմի համայնքային ծառայողին օրենքով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատելու հետ միաժամանակ իր հրամանով զրկում է նաև տվյալ դասային աստիճանից.
12. օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում.
13. համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր հայեցողությամբ որոշում է աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոնները փոխարինող համայնքային ծառայողների կողմից զբաղեցնելու հարցը.
14. օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի հետ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր.

15. աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր.

16. աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն այդ համայնքային ծառայողի պաշտոն զբաղեցնելը մինչև մեկ տարի ժամկետով շարունակելու թույլտվության մասին.

17. կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները.

18. համայնքի ղեկավարին է զեկուցում ամենօրյա փոստը և թղթակցությունները.

19. համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում նրա որոշումները և կարգադրությունները.

20. աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները.

21. ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ.

22. համայնքի ղեկավարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

23. իրեն անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.

24. ապահովում է աշխատակազմի գործառնական, նամակագրության և արխիվային գործի վարումը.

25. ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

26. կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.

27. կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

28. ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը.

29. կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

30. վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

31. ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.

32. իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

33. անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

34. օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ

բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.

35. օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.

36. իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություն տրամադրելու համար.

37. իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացմանը:

38. Կազմակերպում է աշխատակազմում և համայնքի վարչական տարածքի բնակավայրերի վարչական ներկայացուցիչների սահմանված նստավայրերում գործունեություն իրականացնող աշխատակիցների և տեղադրված կառավարման և այլ տեղեկատվական համակարգերի աշխատանքը:

39. համայնքային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

40. իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

